ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> ----------08----------2025թ. N ՄՈ 760-Ա

ք. Արմավիր

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ N11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՍՏՂԻԿ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աստղիկ Վիրաբյանի 2025 թվականի հուլիսի 31-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Աստղիկ Վիրաբյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի օգոստոսի 5-ից 25-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աստղիկ Վիրաբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հումանիտար մասնախմբի նախագահ Սիրուշ Իսպիրյանին:
3. 2025 թվականի օգոստոսի 5-ից 25-ը ներառյալ «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հումանիտար մասնախմբի նախագահ Սիրուշ Իսպիրյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աստղիկ Վիրաբյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվական օգոստոսի 26-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**